

ԱՐԳԱՐ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ 1

ՀԱՅՐԵՆԻՔ, այս նախանձելի և ըղձակաթ անուն, յամենայն մահկանացուաց ըստ կենաց նոցին բարգաւաճութեան գգուանօք կարդացեալ, գովեալ, և մահու չափ առ 'ի նոցանէ պաշտպանեալ, երբ արդեօք, ո՛հ արք աստուածարեալք և եղբարք արգոյք, երբ արդեօք և 'ի ձերումս յայսմ համարձակութի առցէ յիմաստնախումբ կաճառի, որ պատկառելին է և սիրեցեալ 'ի մերոց քաղցր հայրենեաց, եթէ ոչ այսօր, մինչդեռ ահա աշակերտեալքս ձեզ մանկտի զհայրենեանն խնդրեն ճարակ մտաց՝ զոր ծնողքն չէտուն նոցա . մինչդեռ արդարև մեզէն իսկ տեսանեմք զի հայրենեաց ճաշակք համօրէն մերազնէիցն քմաց ախորժագոյնք ընծային . մինչդեռ ամենեցուն սիրտ բաբախեալ, ոչ գիտեմ յորպիսի ինչ ազգմանէ, դառնայ յայն կողմն՝ ուստի յարուցեալ անծերանալի աստեղն աշխարհի՝ ձեմեցուցանէ զճառագայթս իւր զծերացեալ աւերակօք հայրենեաց : Սահի անցանէ թեթևակի հայկազն սերունդ ընդ նշխարս տիեզերասաստ քաղաքանւոյն Ռաբելոնի, լինուէի, լիբատանայ և Պերսեպօլեայ, ընդ կիսով չափ ընդաւազեալ վայելութիւնն անապատի, ընդ Ռաղաթ և ընդ Ռատմոր և ընդ Պետրա, զորովք հանգոյն թևոց թռուցելոց թափառնական տատանին տաղաւարք Մրաբացւոյն, և ընդ կոհակակոծ դոյզն ժամադիրս ձկնորսաց ընդ Սուր և Ը Սայդան, ընդ Սարքեդոն և ընդ Սասիոնգաբեր, այլովքն հանդերձ . և շուարեալ իմն և շփոթեալ և իբրու պաշարեալ յայնքանեաց միջի ահեղից երբեմն և շահաստան քաղաքաց, որ արդ ընդ ոտամբ ժամանակին տա-

1 Ցես երես 314 :

պատ դնին և 'ի մուրացիկ պրակս պատմութեց և եթ ապաստանք, սիրտ 'ի բռին մուանայ առ վայր մի զիւր զբազմաժամանակեայ զհարուածան, որոնէ երկբայելի աչօք, թէ գուցէ բնաւ յաւերակս անդ և նշխար ինչ կենդանութեան հինաւուրց երկրին հայոց մեծաց :

Մի . լուեսցեն վարանք քո, որդիդ Մրամայ . քաջալերեցարուք զաւակք Սորգոմայ . իբրև զծով ծածանեսցի երթիթամած սիրտ հայաստանեայց, զի ոչ ժանգք և ժանիք ժամանակաց և ոչ բռնութիւնք անօրինաց՝ ոչ այնքան խորագոյնս կարացին արկանել 'ի հայկեան հայրենիս զապականիչ կնիքս իւրեանց, մինչև բնաջինջ առնել զցանկալի յիշատակս նորա 'ի սրտէ ապաժաման որդւոց : Մի, կենդանի է տակաւին պատուականագոյն մասն մերոց հայրենեաց, այս ինքն է ոգին հայրենասէր, որ հիմն և զօր է համօրէն աշխարհին : հայրենասէրն այն ոգի, զոր ո՛հ ոչ տեսանէ օր քան զօր բողբոջացեալ յազգիս մերում՝ ի տիպ ծայրակարմիր ծխոյն զոր հոգերգողն յանապատէն ետես 'ի վերացման՝ նուրբ է տեսակաւ զառաջինն, այլ տակաւ ստեղնախիտ ծառասցի բարձրացի տարածեսցի յընդհանուրս :

Եւ ո՛ լինիցի այսքանոյ առաքինութեան զօրաւիգն դիպողագոյն, քան թէ անվրէպն և հզօրն Մրդարութի, որ համաշխարհական կանոն է երկնից և երկրի : Օսմանէ և իմբուուն հարեալ առաջի վսեմական ժողովոյս, ջան եդից ցուցանել առ հասարակ իմոց մերձաւորաց և բացական ազգայնոց, եթէ զարդարութիւն պարտ է մեզ անմեկին ունել միշտ 'ի հայրենասիրութենէ, առ 'ի գործելոյ զսա օգտակար ազգի, օգտակար անձին, և հաճոյ Մստուծոյ . և յայտոսիկ գլուխս բովանդակեմ ես զուղիղն հայրենասիրութիւն և զխօսս իմ : — Հայադու ինձ արդարութիւն սուրբ և ահաւոր, լեր աստատին առաջնորդ 'ի խօսել՝ թէ ոչ ըստ արժան իմաստու-

Թեան , գէթ անբասիր ստուգուածք ,  
և իմոցս ազգակցաց՝ ի լսել նովին ան  
շեղ և ուղղասէր մտօք , որպէս զի մի  
ոք յատենէ քուսմէ ելցէ պարտաւոր :

Ա .

ՍԵՆՏԻ և վսեմական առաքինու-  
Թեան սիրոյ հայրենեաց զարդարու-  
Թիւն կարգել օժանդակ՝ այնքան ՚ի  
ճահ ինձ թուի , որքան զի ստէպ ՚ի  
ծայրայեղսն վրիպին մարդիկ ՚ի նմին ,  
կամ դանդաղու թեամբ ըղձից և հո-  
վու թեամբ անժաման գտեալ ՚ի նպա-  
տակն գեղեցիկ , կամ տարապայման  
բերմամբ անդրագոյնս ձգտեալ : Այլ  
զայն զի արդարութի ոչ ուղղէ միայն ,  
այլ և պահանջէ իսկ զհայրենասիրու-  
Թիւն , յայտ առնէ և կոչումն իսկ ա-  
ռաքինութեանն . զի զինչ է հայրե-  
նասիրութիւն կամ ազգասիրութիւն ,  
եթէ ոչ աղապատանք իմն ՚ի մարդուս  
ընդ երկիր և ընդ ազգ հարազատու-  
Թեան իւրոյ , տնկեալ ՚ի բնութեանս  
՚ի ձեռն այնորիկ որոյ զնոյն օրէնս  
հրամայեալ է ամենայն արարածոց , և  
նովիմբ հային լուսապայծառ երբէք  
ոչ արշակէ ՚ի սահմանս Երզողին , և ոչ  
Բարապանաց բեւեռին առ Շնիկն  
լինի ընթանալ . և ոչ սպառնանկատ  
ալեացն ծովու գրաւել զափունս՝ զորս  
՚ի յաւիտենից ընդ ահիւ նուաճեալ  
ունին : Այլ եթէ զանց զսոքօք արա-  
րեալ նկատեսցուք ՚ի մարդս , հաւա-  
տարմագոյն և սպառնալու կայնա այդց  
օրինաց . որպէս և տեսանեմք իսկ զո-  
մանս ՚ի սպառուածս հողագնտոյս ՚ի  
նկուղս սառնապատս ձիւնածեծ լի-  
նել , և զայլս ընդ տապագին տօթով  
հասարակածին տառապեալս , և եր-  
կոցուն և ս հաւասար սիրելի զծնելա-  
կան վայրսն , որպէս Արկադացոյն  
հովիտք Տեմպեայ , հելլէտիացոյն  
ձորադաշտակքն Ալպեայց , և Խտալա-  
ցոյն հայրենին իւր դրախտն Եւրո-  
պայ : Այլ և առաւել քան զսոյն . ոյր  
ոչ իցէ ընթերցեալ ՚ի Բուզանդացին  
կո՞ ՚ի Արոկոսպիոս զսրտառուչ դրուագ

ուրումն ՚ի մերոց Թագաւորաց , զվա-  
տաբախտիկ որդւոյն Տիրանայ , զոր  
արժանն տանէր ՚ի բուռն ամեհի  
Պարսկին . մինչդեռ շահնդն շղթայիցն  
հնչէր , և տարագրութիւն Անյուշ  
ամրոցին կայր առաջի , և մահուն ար-  
հաւիրք զսրտիւն զառածանէին , և  
գիտակցութիւն բունագոյն քան զա-  
մենայն՝ բուռն հարեալ զգլխոյ թը-  
շուառականին ՚ի վիհ կորստեան գլու-  
րէր , ահա դոյզն ինչ հող հայրենի լի  
տատանեալ ոտիւք օտարացեալ տն  
իւրոյ տարածանի . անդէն առ նմին  
սիրտն ճնշեալ այլ ոչ նուաճեալ յանձն  
իւր գումարի , գիսակքն աղբբեկք  
տէգս կանգնեն , աչքն միգամածք փայ-  
լատակունս արձակեն , և որպէս ստոյգ  
բոցաշունչ կապակոտոր՝ սպառնալից  
փոնչմամբ վազէ զարքայից արքայիւն  
քաջ քաջ յոխորտալով՝ որպէս անդ  
ուրեմն ՚ի սպառուարս իւրակերտն Ար-  
շակաւանի : Առասպելք թուիցին ձեզ  
իրքդ . ալէ բարձէք ՚ի միջոյ զհողդ  
հայաստանի , և զանուն նորա միայն  
յիշեցէք , և ահա ոչ պակաս ինչ ազ-  
ցէ այդեսդ ՚ի սիրտ նորա , որոյ արու-  
թք ժուժկալեալ աղիտիցն որպէս և  
պատերազմաց , յիշատակաց միայն  
հայրենականաց ժուժել ոչ կարաց ,  
խաւար սրտին զաչօքն անկաւ , և զիւր  
ձեռնս դահիճ՝ աղեացն առաքէր սոս-  
կալի եղերամբն , ողբալի օրինական  
յանձն իւր ճշգրտեալ զտրտմականն  
ճմարտութիւն , եթէ այնպէս հզօր  
է ՚ի սիրտ սէր և կնիք հայրենեաց՝  
մինչև բունութեան չգտանել մարդոյ  
պատուհաս մեծ քան զարտասահմա-  
նութիւն , և ոչ ուստեք այնպէս նե-  
ղել մարդոյ քան ՚ի սիրոյ հայրենեաց  
յորմէ զրկեցաւն :

Այլ զիարդ , ասեն , եթէ այդպէս  
ինչ էր , տեսանիցեմք ոչ սակաւս ՚ի  
մերոցն անփորձս ՚ի սիրոյ ցանկալի  
հայրենեաց : — Եւ զոր հայրենիս ա-  
սիցէք . քանզի բազմաց , և ըստ ոչ  
բաղդի հայկազանցս մեզ , այլ իմն վի-  
ճակեալ են եկամուտ հայրենիք ան-  
դրստին ՚ի ծնէ , և զնկին գրաւեալ

զիրաւունս : Սակայն այդ չէ ինչ . կայ միւս այլ պատճառք , գործն այն և սևասքօղն տգիտութիւն , որ թէ վերացուցանէր միանգամ զվրանս իւր 'ի Հայաստան աշխարհէ , լինէր արդեօք Հայն որպէս յազգս առաջին՝ նոյն և յազգասէրս : Օ՛ի չիք ինչ այնպէս կարող առ հովութիւն հայրենեաց սիրոյ՝ որպէս անձանօթն մնալ հայրենեաց , և ոչ դարձեալ 'ի սէրն վառող՝ որպէս զձանօթութիւն նորին :

Ը որ տեսէք որպէս իմաստուն գտան նախնիքն մեր՝ առ 'ի վառել և անշէջ թողուլ զսէր հայրենեաց . զառաքինեացն յիշատակս և զերեւելի երեւելի դէպս իրաց՝ յերգս , յարձանագիրս , 'ի դիւանս , 'ի մեհեանս աւանդէին , մանաւանդ թէ 'ի բերան և 'ի սիրտ հասակակցացն , 'ի յիշատակ և 'ի միտս յապա եկելոցն : Անգիտանայք զոր ինչ արմատն մեր արար Հայկ հուպ ընդ հուպ առաջնորդելով ժողովորդեան յազամողեան Ռաբելոնէ 'ի բնիկ հայրենիսն . և զոր Արամն արար քաջն՝ լեզուին քաննիզակին հարկատու առնելով զազինս նուաճեալս : Իսկ Աղաբազակ , միւսն այն Հայկ , կամէր իմն սանձել առ վայր մի զեռանդն սրտին՝ մինչև հասցէ քաջիկ ծանօթութեան ազգին՝ որում եկաց թագաւոր . Եհաս , և ամենայն սիրոյ գտեալ զնա արժանի՝ հայրաբար գրուեաց զնա : Յետին կամ թէ առաջին 'ի զգնագոյն իշխեցողս Ասիոյ Տիգրան գողող՝ յաղեքսանդրեան մատենադարանից հանեալ զվէպս նախարարութեանց աշխարհին՝ ծանօթս ետնոցա , և միաբանս իազացոյց անդր քան զսահմանս ծանուցեալս 'ի հօրէն և 'ի հաւոյն , և ընդ հուովմէականն մրցել արծուիս : Եւ զի՞ մի մի յիշեցից զցանկալի դարս Արտաշիսի դիւանաց նորոգողի , զԱբգարուն և զԱռամշապհոյ և զոր 'ի զինիսն . զի գրեա թէ միշտ մինչդեռ Սահակք և Սահանք , Աշոտք և Վագիկք իրախոյս տային յուզել զմօրացեալ ծովս ազգային յիշատակաց , և Սովսիսեանք

և Յոհաննեանք և Վաղարք և Թուամայք ձեռն 'ի գործ արկանէին , հայրենասիրութի բարձր 'ի գլուխս պանծայր : Իսկ յորժամ սարգի ոստայնք անկան 'ի գրանոցս մեր , եղծան և 'ի մտաց տիպք հայրենիք . և մինչ միւսանգամ դարութիւն 'ի փոշելից անկեանցն 'ի հրապարակ կոչեցաւ , ահա վերստին արծարծանի հայրենասիրութեանն հրատ , և սատարք վառմանն , ո՛վ երանութեանս , ոչ նուազեն . ուրոց քաղցրասցի մեզ աստանօր գոհութիւնս երախտեացն նուիրել՝ առիթայնալիսուոյ առաքինութեան եղելոց , մեր բարերար յիշատակագրացն , 'ի Սարիբասայ և 'ի Սովսիսէ մինչև 'ի Չամչեանն և յԱնձիճեան :

Արդ օ՛ն առեալ , եղբարք պատուականք , քանզի պարտս մեզ ծանեաք զսէրն հայրենեաց , և թէ 'ի սէրն յայն բերումն ծանօթութեք գործի , ջանդիցուք քննել և ճանաչել : — Եւ զոր ինչ արդեօք : — Ինաւ և զամենայն ինչ որ ազգային իցէ . նախ զպատմութիւն ընդհանուր՝ զանցից աշխարհին և զազգին , ապա զբարի բարի ուղղութեց նորին զհանդէս , և յետոյ զթերութիւնս իսկ նորին :

Ճանաչել ասեմ՝ նախ զպատմութի ազգիս մերոյ , որպէս 'ի ճահ է զպատմութիւն ճանաչել ծայրալիւր տեսութեամբ , զի թիւրն և թերատն տեսութիւն՝ յստակ իմացուած ոչ ունին ընծայել : Այլ քանզի ոչ է ամենեցուն առ այդ բաւական լինել , իմաստասիրացն և պանծացեալ հայրենասիրաց լիցի գործ՝ պարզել և դիւրահաս առնել զպատմութիւնս , և ամենայն չափու հասակի զպատշաճագոյնն մատուցանել որոճ : Ի բերան տացին մանկանց տղայոց յետ քրիստոսական իմաստիցն՝ առաքինեաց հարցնոցա գործք և առածք , և ըստ աճել տիոցն ձեմեսցեն 'ի ծաղկաքաղս նոցին վիպաց : Վատանեակն ըստ մտացն աշխուժից զուարճացի և յերգարանս բանաւորս . 'ի զգօնութիւն մատենագրին կամ վարժապետին յանձն լիցի

զգուշութիւն բարոյական իմացուածոց, զի մի յապշոպս աշխուժութեան արշաւակի մըրկեալ մտացն տհասից՝ արտաւազդօրէն խարդաւանիցին յանդունդս անդառնալիս : Օ գօնութե և վերականգութե հասակն ընթերցցի ուշով զխոհեմական գնացս և զտնտեսութիւն առաջնոցն մերոց հայկազանց, և զՎ աղարշակայ, զՄ բգարու, զՄ քտաշխի, զՄ քտաւազդայ իշխանին և զՄ մբատայ, զՄ շոտեանց, ըզՎոստանդնի և զՄ Եթմոյ, այլովքն հանդերձ : Վահանայքն՝ Մտուծոյ և ժողովորդեանն սպասաւորք, ընթերցցին՝ ի տան և յեկեղեցւոջ ըզկեանս վեհագունից արանցն՝ որ յերկինս խառնեալ նստին : Վպրութեց թեարկուք առաջի աչաց ունիցին ըզՍարգմանիչսն և զուսումնասէր դարս ազգին : Վանանին անգամ, որոց ոչ փոքր մասն է յազգի և յազգասիրութեան, ընթերցցին զվիպասանս գողթնացի երգաբանից, և զՍիգրանուհի և զՄ շխէն, զՄ անդուխտ և զՄ ուշան, զՄ Չուիկ և զՄ արիամ, զՄ լունէ և զՄ Օպել, զՄ Տիկնայս Մամիկոնէից, և զՄ ազրատունեաց դշխոյս, և զկանայս կապելոյ նախարարութեանն :

Ղանաչել, երկրորդ անգամ, զբարիբարի հանգամանս բնակաւոր հանձարոյ ազգին, զի ոչ ինչ այնպէս հզոր է յուղղութիւն զմարդ ածել՝ որպէս օրինակ բարւոյ իւրոյ նմանոյն : Սէն իսկ հայկական գրոհիս վիճակեալ ոչ սակաւ առաքինութիւնք սեպականք և սխրալի բարեմասնութիւնք, զարթուցիչք սրտից, զոր աւելորդ համարիմ զյայտնին ամենեցուն և զյիշատակեալն յայլ և այլ նուագս՝ երկրորդել աստէն :

Ղանաչել, երրորդ անգամ, և զչարեացն խառնուած՝ անհրաժարելի գրեալ է յամենայն մեղեաց, և յապաւմամբ նոցին զբարւոյն աճեցուցանել զմասն : Սորչել ի յանդիմանութենէ թերութեանց այնոցիկ է՝ որք ոչն մատչին միամտութեամբ առուղղութի . բայց յանձն հայրենասէր

որ յօգուտ ազգին իւրոյ նկրտի՝ այդպիսեաց մեղմելս խորհրդոց տեղի գրտանել ոչ է վայելուչ . միօրինակ անմտութիւն վարկանի նա թագուցանել զառողջութիւն իւր և զհիւանդութիւն : Սն վէրք՝ որք պատանօք շատանան, գիտեմ և ես . այլ էն և ս զոր պատանք և սպեղանիք առաւել զայրացուցանեն . հո՛ւր, սո՛ւր, խարան, երկաթ, ածցի մատուցի նոցա . և մի ոք ընդ այս զանգիտիցէ, զի ամենայն վասն օգտի հայրենեաց է . և ուստի՛ բնաւ երկիւղ, եթէ վերաւորելոյ հայաստանի արդարութիւն է անդամահատ և սէրն բժիշկ : Սքէ մատիր դու աներկիւղ, ո՛ր արդարութիւն անրկ զձարտար գործիդ ի վէրս սրտի ազգիս մերոյ, և ի միջոյ երակացն կենդանութե՝ հատ կտրեա զօձաձև նախանձն չար, որ զանխլաբար ձարակի ի մարմնին . և դու առ նմին, սէր աննախանձ, հեղ ծաւալեա ի նա զանուշարարդ քո զապրսամ . արդարութիւն, ի բաց հան ի ներքուստ անտի զորդն ամբարհաւաճութեան, և դու սէր անձնուրաց՝ մոռտ տիրեա անդանօր . դու արդարութի, ի բաց թափեա զխղիւսյութեալն անձնասիրութի և զներտրամադրեալ յամառութիւնն չար, որ զաստուածեղէն միաբանութեանն զօդ անչքեցին ի մեզ, և թերևս ամենայն աղիտից մերոց նախաճնողք եղեն . և դու սէր խաղաղարար, կակղեա զկարծրութիւն կամաց : Սինդ ի ձէնջ մերձեցուցէ ի տղբիթական աչսն զփոշին արթնութեան, և միւսդ լուսատեսակ իմաստութեամբ փարատեսցէ զմթազգած լուսունան . մինդ զտարապայման շահասիրութեն հատցէ զոստոս, և միւսդ զբարերարութե փթթեցուցէ ծաղկունս . մինդ զգանդաղկոտ գարշա-

1 « Որ ամաչէ յայտնել զվէրս իւր բժշկի՝ ծնանի ի նմա խըզենի, և ամենայն մարմին նորա գառնայ յապականութիւն . իսկ այն որ ոչ ամաչէ՝ բժըշկին վէրք նորա և դարձեալ գառնայ ի պատերազմն . իսկ որ խլիղն կայ յանձն իւր՝ չք ինչ հնար բժըշկութեան նորա » : ԶԳԾ . է :

պարս մտաց 'ի շաւիղս ծանուցելոյ բարւոյն մտրակեսցէ , և միւսդ զսանձից կալեալ ընդ ուղիղն յառաջեցուցէ : Աւ այլ զի գիտեմ . համօրէն արտք և տկարութիւնք յայտնեսցին ստուգութեամբ՝ բժշկութե անձկանօք , և դարմանեսցին գթասիրաբար :

Աւ իբրև այսպիսեօք և այսքանեօք ծանօթութեք հասու լիցուք բարեմասնութեանց մերոց և յաջողեսցուք յուղղութիւն անբարեացն , մի յապաղեսցուք այնուհետև և 'ի լրումն կարօտութեանց ինչ մերոց արտաքուստ . զի և այս իսկ ամենևին արդարութե է՝ օժանդակել յօտարէն ուր առտնին պակասիցէ . մի զամենայն որ օտարին է՝ առ վաղնջուց կարծեաց՝ իբրև զանհարազատ և զխորթ ինչ 'ի բաց մերժել , և մի զամենայն որ զարգացելոց ազանց է հնար՝ անխտիր ընդունել . այլ վաճառականի իմաստնոյ նմանել յայսմ , օգտակարացն և կարևորացն լինելով 'ի ինդիր , և 'ի նոսին այնուցիկ միայն որ զոճ՝ և զախորժակ ազգին ոչ իւրք եղծանիցեն . զի զվնասակարացն բուռն հարկանել՝ արդարև մահ է ոգւոյ հայրենեաց , իսկ յօգտակարացն հրաժարել՝ կենաց մերժումն է : Ատղէք զսնոտի երևոյթս և զարտաքին զակնախտիղ հրապուրանս՝ յորս անմիտք պատրին , և հետևողք լերուք գեղեցիկ կարգաց եւրոպացւոց 'ի դաստիարակութիւն , 'ի հնարս յառաջատուութեան ազգային ոգւոյ , յընկերութիւնս և 'ի շինուածս կենցաղօգուտս , յանհաւանակ ունկընդրութիւն կարծեաց , յաննախանձ ձեռնտուութիւն , 'ի բարենախանձ մրցմունս , և յազգս ազգս գիւտից օգտակարաց և վայելչական դիւրութեանց , որով նոքա զաշխարհ և սքանչւս 'ի զարդ և 'ի նրբութիւն տանին և զմիտս 'ի կատարելութիւն : Ար ինչ 'ի մեզ տգեղն է ( զի անթերի գեղեցկութիւն ոչ ումեք ընդ արեգակամբ ձրի շնորհեալ է ) ճմարիտ գեղով յարդարեսցուք , զգեղեցիկսն մի երկիցուք ընդ պատշաճին արուեստա-

սիրել , զի մի առ գեղեցկագունիւք օտարացն մերքն նուագեսցին , և զտիրապէս չքնաղն զմեր , կամ որոց աւելորդ է նոր երկասիրութիւն , անփոփոխ հանցուք յերևան : Ահայս պէս արարեալ հանէք , ցուցէք , պահեցէք անազարտ զքնիկ բարութիւնս ձեր , զազգային զանբասիր սովորութիւնս և զկարգս վայելուչս : Օգուշացարուք մանաւանդ յայն ինչ՝ որ սեպհական մասն է բաժնի ձերոյ և վիճակ յաւիտենից , 'ի լեզուդ ասեմ հայկական :

Պանծայք դուք ընդ հայրենասիրութիւն ձեր . նորոգեցէք ապա զիշատակս նախնեաց , նկարեցէք զպտկերս նոցա , զարթուցէք զբամբիւս Վողթան , զերգս Տայոց և Վորդուաց , զնուագս Արտազու :

Հայրենասէրք իցէք ազնիւք դուք . հնապա բարտ և վրձին 'ի ձեռին սլացարուք անդր , և ձգեսցին հետազօտութիւնք ձեր յերկնաձեմ դագութանցն Արարատայ մինչև յանդնդախոր վիհս նորին . տեսէք քանի՞օն անդանօր պաղատին առ ձեզ սիւնք աչնուականք , կամարք գրկատարածք , անդաստակք երերունք , հայել միանգամ և ողորմել 'ի վաստակս հարց ձերոց՝ մինչ դեռ ևս 'ի սպառ հողոյ հաւասարեալք ոչ իցեն :

Հայրենասէրք իցէք . փութացարուք զազնուագոյն յիշատակարանս հայրենեաց թափել ազատել յազկաղկ ցեցոյ անտի՝ որ գողողիս բանայ ընդ թանձրութիւն հրաշալի մատենիցն , մինչ դուք հեղգք քան զնազաւուրս ձեր մաշէք : Ատգիտութենէ անտի և 'ի կոյր նախանձուէ , որ զաշխարհալոյս ջահսն ընդ գրուանօք ծածկեն որմոց և զանխուղ դարանից , և անխիղճ իմն մտաւոր սպանութի 'ի գետ և 'ի հուր ամանան զնոսա : Վու որ զայդ տեսանես և գիտես և անփոյթ կաս , զաւակ հայկայ , իցեն բնաւ դու հայրենասէր . ջանայցեն յօգուտ ազգիդ : Իցեն հայրենասէր դու , որ զձգրտագոյն կնիք հայրե-

նեացդ ուրացեալ ես յանձնէդ , այսինքն է զսկզբնական քո լեզուն , առանց որոյ ոչ հայ ես և ոչ անհայ : Եւ յիստակէք և իմաստունք , օգնական լերուք եղբարցդ անգիտաց . լերուք նոցա նոր Երամ , նոր Սեսուրովպ , այլ ոմն Սմբատ Բագրատունի , և տուք ՚ի բերանս նոցա զլեզուն Հայկայ , զլեզուն Երոյի , զլեզուն Երամայ , զլեզու ճարտարապետին խօսից այ :

Եւ յետ այսր ամենայնի , ասիցէ որ , եղէ՞ ես կատարեալ հայրենասէր և օգտաբեր ազգին : Տակաւին ոչ . զի կայ մնայ գործ մեծագոյն յօգուտ ազգային . այս իսկ է հայրենասէր լինել ոչ առանձինս միայն , այլ ազգովին . զի առաքինութեանս այսմիկ առաւել քան թէ այլում ճահաւոր է հասարակաց լինել , զի մի ունայնացին վաստակք մենաւորին : Եւ կենդանութիւն ազգի՝ անկ է ընդհանուր ծաւալել զշունչն կենդանարար : Եւրդ քեզ ասեմ հայրենասէրդ , եթէ իմաստուն իցես , հաղորդ արա իմաստութեան քում և զտգէտն , և տարածես զսէր հայրենեաց . աւագ իցես , էջ առ անաւագսն և ՚ի վեր ամբարձ զնոսա . հզօր իցես , ձեռն տուր անզօրաց . գերածայրել զազգն փափաքիցես , մի առ մի ընդ աստիճանսն ՚ի վեր զնա խաղացօ . զքաղց նորա հարկանել կամիցիս , նախ կաթն և հաց ջամբեա , ապա թէ կերակուր հաստատուն : Եւ յիստակէք և մի բնաւ առ լքումն ինչ թուիցին ձեզ ասացեալքս , քաւ յինէն , զի ինձ անհաւատութիւն իմն է հայրենեաց սիրոյն մոռացումն , այլ ոչ փոքր ինչ քան զայն և շողփաղփ և շողմոգ հայրենասիրութիւն ոմանց շողաւաշուրթն բերանոց , որ բանիւ լոկով և ըզձիւք փափաքանաց համարին ուղղել զամենայն : Եւ , մի որ լըբցի , այլ բուն հարցէ ամենայն որ յօգուտ ազգին որով իւրք և ձեռնհասն իցէ , որ հանձարով՝ հանձարով , որ իշխանութեամբ՝ իշխանութեամբ , որ յարուեստէ՝ յարուեստէ , որ ընչիւք՝ ընչիւք :

Եւ զի՞նչ մեծ , զի՞նչ սքանչելի քան զայս , զի և այսպիսեօք դուզնաբէրիւք վաստակօք ոչ միայն հայրենասէր որ լինիցի օգտակար ազգին , այլ և արժանի հայր հայրենեաց անուանելոյ , հաւասար Տիգրանայ և Տրդատայ , Կրիզորի և Կերսիսի : Ո՛հ եթէ Հայոյն ամենայն սրտիւ վասն օգտի իւրոյ ջանացեալ էր , քանի՞ երջանիկ էր այսօր տուն թորգոմայ . և եթէ յիշէր զի Ողիւսէս ոմն զանմահութեան պարգևս , Սահանն Եմատունի զթագ Երշակունեաց և Սմբատ զարև իւր ուրացան վասն օգտի հայրենեաց , ոչ գտանէր անշուշտ վատութիւն մեծ քան զձեռնութեան լինել յարդար օժանդակութենէ իւրոց հայրենեաց :

( Եւստիս յառաջիկայս ) :



Փոխ որաւո՞ ճարդդ ճանչցիր :

Եւստիս մէկը օր մը կը մօտենայ մէկուն ու կ'ըսէ . « Ինչիւրք մը ունիմ հրամանոցդ , կ'աղաչեմ որ չէ չըսես » : — « Ի՞նչ կը հրամես » , կ'ըսէ մէկալը : « Կը խնդրեմ որ քիչ մը ստակ փոխ տաս ինձի » : — « Թողութիւն կ'ընես , պարոն , կ'ըսէ . ես զհրամանքդ ամենեւին չեմ ճանչնար » : Պատասխան կուտայ մէկալը թէ « Ես ալ անոր համար է որ հրամանքէդ կը խնդրեմ . վասն զի զիս ճանչցողներուն մէկն ալ չուզեց ինձի փոխ տալ » :

